

ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով. Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ. Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакеъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն). Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով. Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ. Տէլէֆոն № 253.

Բ Ա Յ Վ Ա Ս Ե Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԵՐԿԱՅ 1901 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԻ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՄՇԱԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ա մեն օր բացի տօներէն յաջորդող օրերէն.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մ շ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ի բ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 ռուբլի. Եւ ռ օ յ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ռ ս կ ա ս ա տ ա ն ի բաժանորդները 10 ռուբլի:

ՄՇԱԿԻՆՆԵՐ ԳՐՎԵԼ ԿԱՐԵԼ Է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազմաթիւ եւ Բարձրակարգ փողոցներէն անկիւն): Կայարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է զիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լիզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ձ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նպատակայարմար չէ. — Ներքին Տեսութիւն. Մամուլ. Նամակ կարգից. Նամակ Խրատարութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԵՒ ՏԵՍԻՍԻՒԹԻՒՆ. Նամակ ֆրանսիացից. Արտաքին լուրեր. — ՀեՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ուսանողութիւնը:

մանակ: Սակայն այդ լաւ նպատակին հասնելու համար մշակվում է այնպիսի ծրագիր, որ միւս կողմից վնասակար է լրագրական գործի զարգացման համար:

Արտաստուգումները համար առանց այն էլ գոյութիւն ունեն որոշ սահմանափակումներ եւ անկարելի է արտասպել որ եւ է յօդուածի մի երրորդական մասից աւելի: Իսկ այժմ եւ այդ մասի վրա գրվում է նոր սահմանափակում, թէ եւ բարեգործական նպատակով:

Արտաստուգումները մեծ մասամբ կատարում է գաւառական մամուլը, որ յաճախ ներկայ պայմաններում անկարող է լինել միջնորդին յօդուածներ տպել: Գաւառական մամուլը դեռ շատ տեղ անշահաւէտ ձեւերով գրվում է, որ գոհողութիւն է պահանջում հրատարակիչներից եւ խմբագիրներից: Կնիւ գաւառական մամուլի վրա մի աւելորդ ծանրութիւն այն ժամանակ, երբ նա կարող է աջակցութեան եւ օժանդակութեան, առնուազն աննպատակայարմար է:

Կրթականների ընկերութեան ներկայ ծր-

օրինակին ամենքն են հետեւում: Որպիսի հրակայական բացասական ոյժ են կազմում այդ ուսանողները կենքի մէջ—այդ մասին գաղափար կարող է կազմել միայն նա, ով ծանօթ է մեր ուսանողութեան փչացած մասի հետ:

Միանգամայն սխալ է այն կարծիքը, թէ մեր ուսանողները իդէալիստ են մինչեւ այն ժամանակ, քանի որ ուսանող են. իսկ այնուհետեւ, իբր թէ, հրաժեշտ են տալիս իդէալներին: Ոչ: Մեր այժմեան ուսանողները բոլորովին իդէալիստ չեն, նոյն իսկ խօսքով էլ չեն իդէալիստ: Նրանք իդէալների մասին նոյնքան են խօսում, որքան եւ բայախանի կառավարիչը: Անցաւ այն ժամանակը, երբ հայ ուսանողը իսկական իդէալիստ էր, անցաւ եւ այն ժամանակը, երբ նա խօսքով էր իդէալիստ: Այժմ նա նոյն իսկ խօսքով էլ չէ իդէալիստ:

Ամեն անգամ, երբ մէկը յարձակվել է ուսանողութեան վրա, իսկոյն մի ուրիշը պաշտպան է հանդիսացել նրան, ասելով, որ եթէ պատուը վատ է, մեղաւորը ծան է, եթէ մեր ուսանողութիւնը վատ է, մեղաւորը ինքը հասարակութիւնն է: Ergo—իզուր են ձեր բոլոր յարձակումները ուսանողների վրա. նրանք անմեղ են: Ինչո՞ւ են նրանք մեղաւոր: Մտնողները այդպէս են ծնել, նրանք էլ այդպէս են: Միթէ դրանից էլ պարզ բան կը լինի: Բայց, բարեբախտաբար, մարդիկ այդ

ըզգիքը անաջող է եւ նպատակայարմար կը լինէր նրան թողնել եւ ձեռնարկել մի ուրիշը, որը դժուարութիւններ չը յարուցանէր այն մամուլի գործի համար, որի մշակներին պէտք է օգնել: Թեթեւացրէք կարօտ զրազէտների վիճակը, բայց մի դժուարացրէք մամուլի եւ մանաւանդ գաւառական մամուլի զրուութիւնը եւ մի ստեղծէք նրա համար նոր խոչընդոտներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Դարձեալ «Սուրճանդակ» լրագիրը սարսափներ է պատմում ժընեվի ուսանողութիւնների մասին իր մի թղթակցի բերանով: Այս անգամ թղթակցից «Սուրճանդակ» չէ, որի մի անվանի գրուածքը հերքելից «Մշակի» մէջ ժընեվի հայ ուսանողութիւնների կողմից: Այժմ գրում է մի ուրիշը, որ այլ եւս անվայել անկարկներ չէ անում, բայց ի վերջոյ համարեա նոյնն է ասում, ինչ ասել էր նախորդը: Հարցը մեր կողմացի ուսանողութիւնն է վերաբերում. բայց եթէ մենք ուշադրութիւն ենք դարձնում այդ թղթակցութեան վրա, պատճառը այն չէ, որ խօսքի առարկան մեր օրիսրդներն են: Ոչ, հետաքրքրականը այստեղ այն է, թէ ինչ հանցանքներ ունեն թիւրքահայերը կանանց բարձրագոյն կրթութեան մասին: Այստեղ անա շատ եւ շատ զարմանալի բաներ են երեւան գալիս մեր առջև: Ահա ինչպէս է նկարագրում թղթակցից ուսանողութիւններին:

Ինչպէս ըսի, ուսանողութիւններուն մեծ մասը բժշկութեան կը հետեւի: Ասոնց կը հանդիպուի բժշկական դասարաններուն մէջ ուսանողներու հետ ըսով ըսովի նստած, խոչընդոտի տակ մարդկային այլ եւ այլ անդամներ կը դնեն, միջբարձրներ կը փնտռեն, մարդկայնութեան սրահներուն մէջ մարդկային դիակներ կը կարտեն այն փոքրիկ ձեռքերով, որոնք թերեւս օգտակար զուակներ հասցնելու եւ մեծցնելու համար ստեղծուած են: Ասոնք այս վերջին սրահներուն զարշահողութեանց մէջ կը խափանուին ամբողջ օրեր, առանց հինգ վարկեան դուրսի մաքուր օդը չնշխու: Տեսած եմ այնպիսիներ այլ, որ առանց լուացուելու սրահը կը ձգեն, իրենց խեղճուկ ճաշը ընելու համար: Վերջապէս այնպիսի կիներ են, որ բոլորովին այլափոխուած եւ կնուրթնէ դուրս ելած են: Փողոցները այս դժբաղդ արարածները տեսնել դժուար չէ: Երբ հանդիպէ կարճ մազերով, արթորինակ լիսակովով եւ հարուստով, նոյնպէս տարօրինակ քայլուածքով ու անձուռի շարժումներով կնոջ մը, ապահով ե-

ղէք թէ ուսանողութիւնն է: Երբ իրեն մօտենաք ձխախտէ ուրիշ բան չի հոտոր վրայէն: (Բացառութիւնները միշտ կը յարգւմ): Գալով իրենց անցուցած կենքին, ընդհանրապէս քիչով գոճ կըլլան. այնպէս որ Զուրիցիերիոյ ամենայնպէս աղքատն իսկ աւելի լաւ կապրի: Աստուծ մինչեւ կէսօր անօթի, կէսօրին ատան ճաշարանի մը մէջ փոքր ինչ ճաշ մը եւ իրիկունը թէյով հաց: Ահա ասոնց անուշը: Գանինք այլ ճանցած եմ, որ օրերով մի երես չեն տեսած եւ մէյնէկ կը մտնէր դարձած են: Մանեք անոնցմէ միոյն սենեակը. նախ ձխախտի հոտն է, որ թոքերէն ներս կը խուժէ, յետոյ աչքիդ կը զարնէ սենեակին աղտոտութիւնը, անկանոնութիւնը, թուղթի կտորներ, գրքեր ապրիս անգին սփռուած: Անկիւն մը կը տեսնես թէ յաման մը, որ իրեն կը ծառայէ իրիկուն խեղճուկ ընթերցող պատրաստելու: Սենեակները ընդհանրապէս փոքր են եւ կը զբաւնուին անօդ եւ ցած փողոցներու մէջ, որպէս զի ատան ըլլան: Այդ արարածներուն ըսով մի փոքրէք կնոջական հրապուրիչ ձեւերը, կուսական շարժումները, քաղցր խօսակցութիւնը, որ պաշտելի կընեն կինը զօրաւոր սեղին. ընդհակառակն ասոնք վերջին ծայր կոչու ու կոպիտ են: Իրենց խօսակցութիւնը գիտութեան անգին չանցնիր, եւ կան այնպիսիներ, որ այլ եւ այլ անօրոտ վարդապետութիւններու (doctrine) կը հետեւին, որոնց համար կը վատեն իրենց ժամանակին մեծ մասը:

Տեսնում էք որքան սարսափներ: Սակայն մի սարսափէք: Այդ բոլոր աներն ու երկիւրները առաջանում են նրանից, որ պօլսեցին զեռ չէ ազատվել հարեմական հակացողութիւններից. ինչ ուզում է լինի կինը, միայն թէ նա դուրեկան լինի զօրաւոր սեղին: Պօլսեցին բանաստեղծ է, նրա ամբողջ կենսաբերք է եւ երբի տեսակէտից, ի հարկէ, սարսափելի պիտի լինի մեկըրդներ զինող կինը: Վերին աստիճան յուզիչ է թղթակցի հետեւեալ վերջաբանը:

Աւելի լաւ չէր, որ ասոնք ուսեալ, զարգացեալ ճշմարիտ մայրեր ըլլալու պատրաստվէին, եւ այսպէսով գոճն օգտակար ըլլային, իրենց երկրի պարկեշտ անդամներ հասցնելով: Եթէ մեր ֆէմինիզմն այլ այսպէս կոչու, աղտոտ եւ կնոջ անուշը արատաւորող արարածներ պիտի արտադրէ առանձնաբար «ուսանողութիւններ» անուան տակ, պակաս ըլլալ այդ ֆէմինիզմը: Նախամեծար կը ճամբիմ տեսնել թրքահայ օրիորդ քիչ մը տղէս, բայց կուսական համարակի շարժումներով, պարկեշտ ձեւերով, քան կողմացի հայ ուսանողութիւն, որ կը հետեւի դժբաղդաբար օտար ուսանողութիւններու անվայել եւ կոպիտ սովորութեան:

Ճաշակների մասին չեն վիճում: Երբ պօլսեցինների համար շատ ցանկալի է, որ իրանց

տեսակ փիլիսոփայութեամբ չեն առաջնորդվում, թէ չէ նրանք գուցէ քարէ դարուում լինէին:

Եւ իսկպէս միթէ մեր ուսանողութիւնը այնքան խեղճ մի գաւառուկ է, որ նա չէ կարող հասկանալ եւ ըմբռնել, թէ ինքը չարիքացնող ընկած է եւ պարտաւոր է բարոյապէս բարձրանալ այդ ընկած գրութիւնից: Եւ վերջապէս միթէ այդ ուսանողութիւնը չէ գտնվում այնպիսի մի շրջանի մէջ, որը իրանից անհամեմատ բարձր է: Այո, հայ ուսանողութիւնը անհամեմատ բարձր է ուսու ուսանողութիւնը եւ ինչ ուսանողութիւնը: Հայ ուսանողութեան կրթողը միայն հայ հասարակութիւնը չէ, այն ունի եւ այնպիսի ուսուցիչ, ինչպիսիս է գաղափարաբան ուսու ինտելիգենցիան: Անցեալ տարի Սօֆիա Դանլիքեան «Մշակում» մի գեղեցիկ յօդուածի մէջ խորհուրդ էր տալիս հայ ուսանողներին կղզիացած չը մնալ եւ չփվել ուսու ուսանողութեան հետ, որովհետեւ վերջինս բարձր է իրանից: Միթէ հայ ուսանողութիւնը այնքան երեխայ է, որ չէ կարելի նրանից այդպիսի անմեղ պահանջներ անել: Այդ պահանջին կարելի էր աւելացնել եւ մի ուրիշը: Մեր ուսանողութիւնը թէ եւ, որպէս ամբողջութիւն, շատ ընկած է, բայց նրա մէջ կան անհամեմատ, որոնք համեմատաբար շատ բարձր են կանոնաւ իրանց չը շարժապատից եւ որոնք կարող էին բարեփոխու-

թեան ենթարկել այդ չը շարժապատից, եթէ միայն նրանք կամենային ունենալ տոկունութիւն, յարատեւ սէր դէպի իդէալը եւ մի քիչ էլ ֆանատիկութիւն: Միանգամայն ճիշդ է, որ ամբողջ ամեն տեղ է ամբողջ, ուսանողութիւնն էլ ունի իր ամբողջ, որին պէտք է առաջնորդել, ղեկավարել: Իսկ ո՞վ կարող է նրան առաջնորդ հանդիսանալ, եթէ ոչ հէնց իսկ այդ ուսանողութեան գիտակցող անհատները: Իսկ այդ անհատները... զբժարախառնար նրանք շատ քիչ գիտեն ոգեւորվել գաղափարով: Հէգէլի այն խօսքերը թէ, «այն ամենը, ինչ որ գոյութիւն ունի, գեղեցիկ է եւ անհրաժեշտ»—այդ խօսքերը մեր ուսանողները մի առանձին ոգեւորութեամբ են արտասանում, շատ անգամ չը հասկանալով նրանց բուն իմաստը:

Ո՛ւր են գաղափարի մարդիկ, ո՛ր են իդէալին ծառայող ուսանողներ: Այժմ թոյլ տուէք, ընթերցող, իմ, որպէս ուսանողի, ասածները երբեք անկող ուսանողութեան մասին: Նա, այդ ուսանողութիւնը, չէ հետաքրքրվում իր ժողովրդի կենսաբով, արհամարհում է իր մայրենի ինքուն եւ գրականութիւնը (95 տոկոսը այդպէս է), նա համարեա թէ հայ ուսանողութիւն կոչվելու իրաւունքը չունի: Ի՞նչ կը լինէր, ընթերցող, մեր դրութիւնը, եթէ, Աստուած մի արասցէ, չը լինէին մեր թեմական

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Ընթերցողը, լսելով, որ մեր ուսանողները գոճն հետաքրքրվում են օտարների կենսաբով, գուցէ մի քիչ հանդիստ չունչ քայլ: Ի հարկէ, այն էլ մեծ բազմաթիւութիւն է, որ մեր այժմեան ուսանողութեան մէջ կան մարդիկ, որոնք հետաքրքրվում են գրականութեամբ ու գիտութեամբ: Բայց, դժբաղդաբար, նոյն իսկ այդ տեսակ զիլիտանտների (զիլիտանտներ— որովհետեւ իսկական գիտութեամբ զբաղվող մարդիկ չը կան մեղանում) թիւն էլ այնքան անհամեմատիկ է, որ նրանք էլ չքանում են ընդհանուր փչացած մթնոլորտում: Իսկ եթէ կամենում էք այդ մթնոլորտի մասին գաղափար կազմել, նայեցէք նոյն Բագուի փողոցներում օրն ի բուն կառքով պտտող ուսանողներին: Նայեցէք նրանց լպտած հագուստներին, լպտած դէմքերին: Արիւնք խիտու է ձեր գլուխին, երբ դուք մտածում էք, որ դրանք են կազմում հասարակութեան առաջաւոր մասը, որ դրանք են կենսաբով մէջ անգին զեր կատարելու եւ նոյն իսկ արդէն կատարում են: Նրանց խօսքը այնքան մեծ զին ունի, նրանց





